

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի

ք.Ստեփանակերտ

«19» փետրվարի 2013թ. ժամը 15⁰⁰-ին

կոլեգիայի նիստին մասնակցում էին՝

կոմիտեի նախագահ Կ.Պետրոսյանը

կոմիտեի նախագահի տեղակալ Մ.Ալեքսանյանը, աշխատակազմի ղեկավարի ժ/պ Վ.Օհանջանյանը, նախագահի խորհրդական Բ.Հարությունյանը, աշխատակազմի գեղարվեստի և հոդային պետական տնտեսության պետ Գ.Բաղդասարյանը, աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման ղեկավար Մ.Ավետիսյանը, ընդհանուր բաժնի պետ Մ.Ոսկանյանը, անշարժ գույքի կադաստրային գնահատման և համակարգված դիտարկումների բաժնի պետ Ս.Առուշանյանը, քարտեզագրման և գեոդեզիայի բաժնի պետ Ն.Գասպարյանը, գույքի գրանցման բաժնի պետ Մ.Ջավադյանը, իրավաբանական բաժնի պետ Ա.Աղասյանը, «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Վ.Իլին Սաֆարյանը:

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի օրակարգը՝

Հարց 1. Ստեփանակերտի քաղաքապետի 2012թվականի փետրվարի 2-ի «Դավիթ Արզումանյանին կառուցապատման իրավունքով հարկադրված հողամասի փոխանակման մասին» թիվ 195Ա որոշմամբ Արզումանյանին կառուցապատման իրավունքով տրամադրվել է 55.0 քմ հողամաս: Նշված որոշումն ընդունվել է ղեկավարվելով ԼՂՀ հողային օրենսգրքի 71-րդ հոդվածը և ԼՂՀ կառավարության 2002թվականի նոյեմբերի 26-ի թիվ 61 որոշմամբ սեփականություն հանդիսացող հողամասերը ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող հողամասերի հետ փոխանակման կարգը:

Քաղաքապետի վերոհիշյալ որոշմամբ Արզումանյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի փոխարեն այլ հողամաս նույն իրավունքով տրամադրելը հակասում է ԼՂՀ օրենսդրությանը, ուստի նշված որոշումից ծագող իրավունքների պետական գրանցումը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ստորաբաժանման կողմից սխալմամբ իրավունքի նմանատիպ գրանցում կատարելու հանգամանքը, հետագայում նման որոշումներից ծագող իրավունքների պետական գրանցում իրականացնել, թե՞ մերժել:

կոմիտեի նախագահը ներկաներին ներկայցրեց կոլեգիայի նիստի օրակարգի հարցը:

Ձեկուցումով հանդես եկավ պետական կոմիտեի աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման ղեկավար Մ.Ավետիսյանը

2013 թվականի փետրվարի 5-ին Մաշտոց 3/60 հասցեով տեղակայված 50 քառ.մ հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը գրանցելու նպատակով Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանում է դիմել Յուրի Շահենի Գասպարյանը, որպես իրավունք հաստատող փաստաթուղթ ներկայացնելով Ստեփանակերտի քաղաքապետի 2013 թվականի հունվարի 5-ի «Յուրի Գասպարյանին կառուցապատման իրավունքով հարկադրված հողամասի փոխանակման մասին» N 42Ա և կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2013 թվականի հունվարի 16-ի N 34 պայմանագիրը:

2013 թվականի փետրվարի 8-ին Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման կողմից գրանցվել է 50 քառ.մ հողամասի Յուրի Շահենի Գասպարյանի նկատմամբ կառուցապատման իրավունքը:

Վերոգրյալ քննարկվող հարցին պարզաբանում տվեց գույքի գրանցման բաժնի պետ Մ.Ջավադյանը՝ նա առաջարկեց Յուրի Շահենի Գասպարյանի կառուցապատման իրավունքի 2013 թվականի փետրվարի 8-ի պետական գրանցումը ճանաչել անվավեր:

կոմիտեի նախագահ Կ.Պետրոսյանը կոլեգիայի անդամների քվեարկության դրեց Ստեփանակերտի քաղաքապետի թիվ 195Ա Յուրի Շահենի Գասպարյանի կառուցապատման իրավունքի 2013 թվականի փետրվարի 8-ի պետական գրանցումը չեղարկելու հարցը:

կոլեգիայի բոլոր անդամները կողմ քվեարկեցին Ստեփանակերտի քաղաքապետի թիվ 195Ա որոշումից ծագող իրավունքների պետական գրանցումը մերժելու և Յուրի Շահենի Գասպարյանի կառուցապատման իրավունքի 2013 թվականի փետրվարի 8-ի պետական գրանցման չեղարկելու օգտին:

Արձանագրող՝ Մ.Ոսկանյան _____

կոմիտեի նախագահ

Կ.Պետրոսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի

ք.Ստեփանակերտ

«25» փետրվարի 2013թ. ժամը 17⁰⁰-ին

կոլեգիայի նիստին մասնակցում էին՝

կոմիտեի նախագահ Կ.Պետրոսյանը

կոմիտեի նախագահի տեղակալ Մ.Ալեքսանյանը, աշխատակազմի ղեկավարի ժ/պ Վ.Օհանջանյանը, նախագահի խորհրդական Բ.Հարությունյանը, աշխատակազմի գեղեցիկայի և հողային պետական տնտեսության պետ Գ.Բաղդասարյանը, աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման ղեկավար Մ.Ավետիսյանը, ընդհանուր բաժնի պետ Մ.Ոսկանյանը, անշարժ գույքի կադաստրային գնահատման և համակարգված դիտարկումների բաժնի պետ Ս.Առուշանյանը, քարտեզագրման և գեղեցիկայի բաժնի պետ Ն.Գասպարյանը, գույքի գրանցման բաժնի պետ Մ.Զավադյանը, իրավաբանական բաժնի պետ Ա.Աղասյանը, «Գեղեցիկայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Վիլեն Սաֆարյանը, Ասկերանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի գրանցման բաժնի պետ Լ.Ապրեսյանը:

Հարց 1. Իրավունքների առաջին պետական գրանցման շրջանակներում շատ են դեպքերը, երբ սխալ տրված տնտեսական գրքից կամ սեփականաշնորհման հանձնաժողովի արձանագրությունից քաղվածքների հիման վրա գրանցվում են տվյալ անշարժ գույքի սեփականատեր չհանդիսացող անձանց սեփականության իրավունքը:

Ձեկուցող՝ Մ. Զավադյան

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ԼՂՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե պետական գրանցումը կատարվել է որևէ իրավասու մարմնի տված փաստաթղթի հիման վրա, ապա թույլ տրված սխալների ուղղումը կարող է կատարվել միայն տվյալ մարմնի կողմից համապատասխան ուղղում կատարելու հիման վրա: Միաժամանակ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական գրանցման ժամանակ թույլ տրված այն սխալները, որոնց ուղղումը հանգեցնում է գույքի պատկանելության, դրա նկատմամբ իրավունքների բնույթի, ծավալի, գույքի մակերեսի չափերի կամ կադաստրային արժեքի փոփոխության (այսուհետ՝ ոչ տեխնիկական բնույթի սխալներ), կարող են ուղղվել միայն շահագրգիռ անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում:

Հաշվի առնելով օրենքի վերը նշված հոդվածի 2 մասերով սահմանված դրոյթները, որևէ իրավասու մարմնի կողմից տրված սխալ փաստաթղթի հիման վրա կատարված իրավունքների պետական գրանցման դեպքում, տարածքային ստորաբաժանումների կողմից համապատասխան ուղղում կատարելու պարագայում անհրաժեշտ է արդյոք շահագրգիռ կողմերի համաձայնությունը:

կոմիտեի նախագահ Կ.Պետրոսյանը առաջարկեց կոլեգիայի նիստի մասնակիցներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիան գտնում է, որ մինչև կոլեգիայի կողմից օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ որոշում կայացրեց պատրաստել գրություն և ներկայացնել ԼՂՀ արդարադատության նախարարություն տվյալ հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:

Հարց 2. ԼՂՀ շրջաններում շատ են դեպքերը, երբ գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսությունների (ԳԿՏ) լուծարումից հետո քաղաքացիներին փոխանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար բացակայում են անհրաժեշտ իրավունք հաստատող փաստաթղթերը կամ էլ դրանք թերի են: Քաղաքացիների մոտ, որպես իրավունք հաստատող փաստաթղթեր պահպանվել են գույքի փոխանցման ակտը կամ արձանագրությունը և գույքի դիմաց վճարման անդորրագիրը: Ինչ փաստաթղթերի առկայության դեպքում հնարավոր կլինի կազմակերպել գյուղատնտեսական կոլեկտիվ տնտեսությունների լուծարումից հետո ակտի կամ արձանագրության հիման վրա քաղաքացիներին փոխանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գործընթացը:

Ձեկուցող՝ Մ. Ալեքսանյան

2. Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիան գտնում է, որ փոխանցման ակտի կամ արձանագրության և համապատասխան վճարման անդորրագրի բնօրինակների պահպանման դեպքում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքներն ընթացքավորելու համար անհրաժեշտ է ներկայացնել նաև հետևյալ փաստաթղթերը.

1. Համայնքի ավագանու արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի որոշում օտագործվող հողամասի նկատմամբ՝ օրենքով սահմանված կարգով հողատեղակայման հիմքերը վերականգնելու մասին

2. Սահմանված կարգով հաստատված հողամասի հատակագիծ

3. Համայնքի ավագանու արձանագրության հիման վրա կայացած համայնքի ղեկավարի որոշումն այն մասին, որ տվյալ գույքը տարիներ շարունակ օգտագործվել է տվյալ քաղաքացու կողմից, նրա կողմից վճարվել են համապատասխան հարկերը և գույքը չի հանդիսանում համայնքային սեփականություն

4. Գույքի դիմաց վճարման անդորրագրի բացակայության դեպքում, վճարումն հաստատող համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանք:

Արձանագրող՝ Մ.Ոսկանյան _____

Կոմիտեի նախագահ

Կ. Պետրոսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի

ք.Ստեփանակերտ

«15» հունիսի 2013թ. ժամը 17⁰⁰-ին

Կոլեգիայի նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի նախագահ Կ.Պետրոսյանը

Կոմիտեի նախագահի տեղակալ Մ.Ալեքսանյանը, աշխատակազմի ղեկավարի ժ/պ Վ.Օհանջանյանը, նախագահի խորհրդական Բ.Նարոյունյանը, աշխատակազմի գեղարվեստի և հոդային պետական տնտեսության պետ Գ.Բաղդասարյանը, աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման ղեկավար Մ.Ավետիսյանը, անշարժ գույքի կադաստրային գնահատման և համակարգված դիտարկումների բաժնի պետ Ա. Սարգսյանը, քարտեզագրման և գեոդեզիայի բաժնի պետ Ն.Գասպարյանը, հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Ծատրյանը, իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Լ. Շեկյանը, ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Ս.Սիմոնյանը, «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Վիլեն Սաֆարյանը:

Հարգելի պատճառներով կոլեգիայի նիստին ներկա չէին գույքի գրանցման բաժնի պետ Մերի Չավադյանը և Տեղեկատվական կենտրոնի ղեկավար Երվանդ Գրիգորյանը:

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի օրակարգը՝

Հարց 1. Քնարկման ենթակա հարցը՝ դիմող Յուրի Մուսայելյանի դիմումի քննության ժամանակ առաջացած իրավական խնդիրն է կապված գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մերժելու հիմքերի հետ

Կոմիտեի նախագահը ներկայացրեց հարցի էությունը:

Գրանցումը մերժելու հիմքերի մասին իր կարծիքը արտահայտեց Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման ղեկավար Մ. Ավետիսյանը՝ նշելով, որ չի պահպանվել 10 և ավելի տարիներ այդ հողամասը տիրապետելու պայմանը և որ նման մերժում եղել է ևս մեկ անգամ և քաղաքապետարանը փոխել է իր որոշումը:

Չեկյան Լ. Շեկյան

ԼՂՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից բխում է, որ քաղաքացին /Յու.Մուսայելյանը/, պետության և համայնքի հողերից հողամաս ձեռք բերելու նախապատվություն իրավունք է ստանում, ավելի քան 10 տարի անընդմեջ բարեխիղճ և բացահայտ, պետության և համայնքի հողերից օգտվելու դեպքում՝ նույնիսկ առանց իր իրավունքների իրավաբանական ձևակերպման:

Անչափահաս՝ տվյալ դեպքում 16-ից 18 տարեկան քաղաքացու կողմից առանց իր իրավունքների իրավաբանական ձևակերպման, պետության և համայնքի հողերից օգտվելու համար, օրենսդիրը որևէ սահմանափակում չի առաջադրել մասնավորապես գործարք կնքելու կամ լրիվ գործունակությամբ օժտված լինելու նախապայման օրենսդիրը չի սահմանել: Հետևաբար ավելի քան 10 տարի անընդմեջ բացահայտ և բարեխիղճ օգտվելը չի կարող բացառվել գործունակության տարիքին /18 տարեկան/ հասած չլինելու հանգամանքով:

Նա առաջարկեց. ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Ստեփանակերտի քաղաքապետի 1089 Ա որոշումը և դրա հիման վրա կնքված N 132 պայմանագիրը առ 01.07.2013 թ. որևէ շահագրգիռ անձի կողմից վիճարկված չէ, Հեկիմյան Յվ/87 հասցեում գտնվող 280,06 քմ. հողամասի նկատմամբ Յու.Մուսայելյանի սեփականության իրավունքի գրանցումը կատարել: Նշեց նաև, որ այդ գրանցմամբ որևէ մեկի իրավունքները չեն խախտվում:

Կոմիտեի նախագահի տեղակալ Մ.Ալեքսանյանը հայտնեց, որ համամիտ է Լ. Շեկյանի կարծիքի հետ:

Կոլեգիայի բոլոր անդամները կողմ քվեարկեցին քննարկվող հարցի վերաբերյալ Չեկյանի և պարզաբանող Լ. Շեկյանի առաջարկությունը՝ նմանատիպ դեպքերում իրավունքի պետական գրանցումը կատարելու մասին:

Քվեարկության արդյունքում կոլեգիան որոշեց քաղաքացի Յուրի Մուսայելյանի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար ներկայացրած իրավահաստատող փաստաթղթերը /ձեռք բերման նախապատվության իրավունքի վերաբերյալ/ համարել գործող օրենսդրությանը համապատասխանող և Յուրի Մուսայելյանի իրավունքների պետական գրանցումը կատարել: Դիմումի քննության արդյունքների մասին տեղեկացնել Յուրի Մուսայելյանին:

Արձանագրող՝ Ս.Սիմոնյան _____

Կոմիտեի նախագահ

Կ. Պետրոսյան



ԼՂՀ ԿԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„15 „07 2013թ.

N 1

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ նախագահին կից կոլեգիան քննարկելով քաղաքացի Յուրի Մուսայելյանի դիմումը և հարակից իրավական խնդիրը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացի Յուրի Մուսայելյանի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար ներկայացրած իրավահաստատող փաստաթղթերը /ձեռք բերման նախապատվության իրավունքի վերաբերյալ/ համարել գործող օրենսդրությանը համապատասխանող և Յուրի Մուսայելյանի իրավունքների պետական գրանցումը կատարել:

2. Դիմումի քննության արդյունքների մասին տեղեկացնել Յուրի Մուսայելյանին:

Կ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի

ք.Ստեփանակերտ

«09» սեպտեմբերի 2013թ. ժամը 16.00-ին

Կոլեգիայի նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի նախագահ **Կ.Պետրոսյանը**

Կոմիտեի նախագահի տեղակալ **Մ.Ալեքսանյանը**, աշխատակազմի ղեկավարի ժ/պ **Վ.Գաբրիելյանը**, նախագահի խորհրդական **Բ.Հարությունյանը**, աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետ **Գ.Բաղդասարյանը**, աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման ղեկավար **Մ.Ավետիսյանը**, անշարժ գույքի կադաստրային գնահատման և համակարգված դիտարկումների բաժնի պետ **Ա. Սարգսյանը**, հաշվառման բաժնի պետ **Ա. Կասյանը**, իրավաբանական բաժնի պետ **Ա.Աղասյանը**, գույքի գրանցման բաժնի գլխավոր մասնագետ **Լ. Շաքարյանը**, ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ **Մ.Ոսկանյանը**, «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն **Վ. Մաֆարյանը**:

Հարգելի պատճառներով կոլեգիայի նիստին ներկա չէին քարտեզագրման և գեոդեզիայի բաժնի պետ Ն. Գասպարյանը և Տեղեկատվական կենտրոնի ղեկավար Ե. Գրիգորյանը:

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի օրակարգը՝

Հարց 1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի քննարկում:

Կոմիտեի նախագահի տեղակալ Մ. Ալեքսանյանը ներկայացրեց հարցի էությունը:

Ներկայացված նախագծի վերաբերյալ ելույթ ունեցավ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման ղեկավար Մ. Ավետիսյանը՝ նշելով, որ դիմող քաղաքացիների մի մասը ցանկանում է գրավի իրավունքի պետական գրանցումը կատարել նույն օրը, որն ըստ ստորաբաժանման ղեկավարի տեխնիկապես հնարավոր է:

Կոմիտեի նախագահի խորհրդական Բ. Հարությունյանը իր ելույթում անդրադարձավ այն հանգամանքին, որ գրավի իրավունքի պետական գրանցումը՝ դիմումը ներկայացնելու օրը, կատարելու պայմանը դժվարություններ կառաջացնի իրավունքների պետական գրանցման գործավարության պահպանման և լիարժեք կատարման գործում:

Կոմիտեի նախագահի տեղակալ Մ. Ալեքսանյանը նշեց, որ քննարկվող փոփոխության անհրաժեշտությունը և առաջարկվող օրենսդրական պահանջի կատարման տեխնիկական հնարավորությունը բավարար պարզաբանված չէ:

Քննարկվող հարցի վերաբերյալ կողմ և դեմ կարծիքներ արտահայտեցին կոլեգիայի նիստի անդամները:

Զվնարկության արդյունքում 3 կողմ և 9 դեմ ձայներով չընդունվեց «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ կետը:

Արձանագրող՝ Ս.Սիմոնյան _____

Կոմիտեի նախագահ

Կ.Պետրոսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի

ք.Ստեփանակերտ

«30» սեպտեմբերի 2013թ. ժամը 16.00-ին

Կոլեգիայի նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի նախագահ **Կ.Պետրոսյանը**

Կոմիտեի նախագահի տեղակալ **Մ.Ալեքսանյանը**, աշխատակազմի ղեկավարի ժ/պ **Վ.Գաբրիելյանը**, նախագահի խորհրդական **Բ.Հարությունյանը**, աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետ **Գ.Բաղդասարյանը**, աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման ղեկավար **Մ.Ավետիսյանը**, ընդհանուր բաժնի պետ **Մ.Ոսկանյանը**, անշարժ գույքի կադաստրային գնահատման և համակարգված դիտարկումների բաժնի պետ **Ա.Սարգսյանը**, հաշվառման բաժնի պետ **Ա. Կասյանը**, իրավաբանական բաժնի պետ **Ա.Աղասյանը**, գույքի գրանցման բաժնի պետ **Մ.Զավադյանը**, «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն **Վիլեն Սաֆարյանը**:

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի օրակարգը՝

Հարց՝ 1. Աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման կողմից 14.02.2013թ. պետական գրանցում միասնական 4-72 մատյանի 146319 համարի տակ կատարված Ա. Առաքելյան փողոցի 2ա շենքի 11 բնակարանի նկատմամբ Վազգեն Արմոյի Ծատուրյանի սեփականության իրավունքը դադարեցնելու նպատակով քաղաքացի Վիլենա Մուսայելյանի կողմից ներկայացված փաստաթղթերը՝ Ստեփանակերտի քաղաքապետի 16.08.2013թ. թիվ 405 գրությունը, Ստեփանակերտի քաղաքի դատարանի 1997թվականի վճիռը հիմք ընդունելու վերաբերյալ:

Կոմիտեի կոլեգիայի նախագահը նիստը բացելուց և օրակարգը հայտարարելուց հետո գնկուցման համար խոսքը տվեց Մ.Ավետիսյանին

- Քաղաքացին դիմել է և խնդրել դադարեցնել Ա.Առաքելյան 2ա/11 տան 4-րդ համասնփականատեր համարվող Վ.Ծատուրյանի սեփականության իրավունքը ներկայացնելով փաստաթղթեր առ այն, որ Վ.Ծատուրյանն այդ տան սեփականաշնորհմանը մասնակցելու իրավունքի չի անցնել /վճիռ/ և որին չի էլ մասնակցել /տեղեկանքը քաղաքապետարանից/: Նշեց նաև, որ քաղաքացու կողմից մատնանշվող գրանցումը կատարելու գործում առկա է եղել քաղաքապետարանի տրված մեկ այլ տեղեկանք ըստ որի Վ.Ծատուրյանը մասնակցել է սեփականաշնորհմանը:

Քննարանն է ներկայացրել քաղաքացու խնդրանքի բավարարման հնարավորություններն օրենսդրությամբ գործող ընթացակարգերի պահպանմամբ:

Զեկուցող **Մ.Զավադյան՝**

Տվյալ դեպքում եթե չկա Վ.Ծատուրյանի համաձայնությունը, ճիշտ տարբերակը դիմողի կողմից դատական կարգով հարցի լուծումն է և հետագա գրանցումը կամ գրանցման դադարեցմամբ դատական ակտի հիման վրա:

Իրավաբանական բաժնի պետ Անուշ Աղասյանն իր ելույթում նշեց, որ մինչև սեփականաշնորհումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով Վ.Ծատուրյանը զրկված է եղել սեփականաշնորհմանը մասնակցելուց ուստի գտնում եմ, որ քաղաքացու խնդրանքը կարելի է բավարարել:

Խորհրդակցական ձայնով կոլեգիայի նիստին մասնակցող Լ.Շեկյանը հարցի վերաբերյալ կարծիք հայտնեց նշելով, որ ստեղծված իրավիճակում, երբ քաղաքացին ներկայացրել է տեղեկանք, որ սեփականաշնորհմանը Վ.Ծատուրյանը չի մասնակցել, նախկինում ներկայացված տեղեկանքը մեխանիկորեն անվավեր է դարձել կամ առնվազն այդ երկու տեղեկանքները բացառում են իրար Վ.Ծատուրյանի մասով: Առաջարկեց հարցում կատարել քաղաքապետից հավաստիացում ստանալ այդ տեղեկանքներից մեկի հիմնավորության և մյուսի անվավերության մասին:

Կարծիք հայտնելով դատական ակտի հիման վրա գրանցման դադարեցումը կատարելու մասին նա նշեց, որ ներկայացված դատական ակտով Վ.Ծատուրյանը գրկվել է օգտագործման իրավունքից և այդ վճիռ սեփականության իրավունքը դադարեցնելու մասին չէ:

Մ.Ալեքսանյանն իր ելույթում կարծիք հայտնեց, որ քաղաքացու դիմումը կարելի է բավարարել նաև ներկայացված փաստաթղթերի հիման վրա, սակայն ավելորդ չի համարում իրար հակասող երկու տեղեկանքների վերաբերյալ քաղաքապետարանին հարցում կատարելը:

Կոլեգիայի նախագահը քվեարկության դրեց քաղաքապետարանի հարցում անելու առաջարկը: Առաջարկը անցավ միաձայն:

Կոլեգիան որոշեց՝

Հարցում կատարել Ստեփանակերտի քաղաքապետից տալ համապատասխան պարզաբանում 2012թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 3358/Մ5 և 2013թվականի օգոստոսի 16-ի թիվ 2055/Մ-5 տեղեկանքների ճշտության վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել նշված փոփոխության համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները:

Արձանագրող՝ _____ Մ.Ոսկանյան

Կոմիտեի նախագահ

Կ. Պետրոսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի

ք. Ստեփանակերտ

«20» նոյեմբերի 2013թ. ժամը 15.00-ին

Կոլեգիայի նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի նախագահ **Կ. Պետրոսյանը**

Կոմիտեի նախագահի տեղակալ **Մ. Ալեքսանյանը**, աշխատակազմի ղեկավար **Վ. Գաբրիելյանը**, նախագահի խորհրդական **Բ. Հարությունյանը**, աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետ **Գ. Բաղդասարյանը**, աշխատակազմի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման ղեկավար **Մ. Ավետիսյանը**, ընդհանուր բաժնի պետ **Մ. Ոսկանյանը**, անշարժ գույքի կադաստրային գնահատման և համակարգված դիտարկումների բաժնի պետ **Ա. Սարգսյանը**, հաշվառման բաժնի պետ **Ա. Կասյանը**, իրավաբանական բաժնի պետ **Ա. Աղասյանը**, գույքի գրանցման բաժնի պետ **Մ. Ջավադյանը**, Տեղեկատվական կենտրոնի ղեկավար **Ե. Գրիգորյանը**, «Գեոդեզիայի, քարտեզագրության, հողաշինարարության և անշարժ գույքի գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն **Վիլեն Սաֆարյանը**:

Պետական կոմիտեի նախագահին կից կոլեգիայի նիստի օրակարգը՝

Հարց՝ Վազգեն Արմոյի Ճատուրյանի սեփականության իրավունքը դադարեցնելու համար Առաքելյան N 2ա/11 բնակարանի վերաբերյալ 2012 թվականի հոկտեմբերի 31-ի N 3358/Մ5 և 2013 թվականի օգոստոսի 16-ի N 2055/Մ-5 տեղեկանքների ճշտության մասին քաղաքապետարանից ստացված գրությունը հիմք ընդունելու հարցը:

Նշված հարցի շուրջ 2013 թվականի սեպտեմբերի 30-ին հրավիրվել է կոլեգիայի նիստ, որի արդյունքում որոշվել է համապատասխան հարցումով դիմել Ստեփանակերտի քաղաքապետարանին:

Գրության մեջ խնդրվել է հնարավորինս սեղմ ժամկետներում տալ համապատասխան պարզաբանում 2012 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 3358/Մ5 և 2013 թվականի օգոստոսի 16-ի թիվ 2055/Մ-5 տեղեկանքների ճշտության վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել նշված փոփոխության համար հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները:

Օրակարգի հարցի քննարկման արդյունքում

Կոլեգիան որոշեց՝

- Վազգեն Արմոյի Ճատուրյանի սեփականության իրավունքը դադարեցնելու համար հիմք ընդունել Վիլենա Մուսայելյանի կողմից Ստեփանակերտի քաղաքապետի 16.08.2013թ. թիվ 2055/Մ-5 տեղեկանքը, Ստեփանակերտ քաղաքի դատարանի 1997 թվականի վճիռը, «Լ.Ղ.Հ պետական արխիվ» ՊՈԱԿ-ի 11.09.2013 թվականի թիվ 405 գրությունը, ինչպես նաև քաղաքապետարանի 08.10.2013 թվականի ել1551/3 գրությունը:

Քննարկվող հարցի վերաբերյալ կողմ և դեմ կարծիքներ արտահայտեցին կոլեգիայի նիստի անդամները:

Քվեարկության արդյունքում 10 կողմ, 1 դեմ և 2 ձեռնպահ ձայներով օրակարգի հարցը ընդունվեց:

Արձանագրող՝ _____ Մ. Ոսկանյան

Կոմիտեի նախագահ

Կ. Պետրոսյան



ԼՂՀ ԿԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

„20 „, 11 2013թ.

N 2

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ նախագահին կից կոլեգիան քննարկելով քաղաքացի Վիլենա Մուսայելյանի դիմումը և հարակից իրավական խնդիրը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վազգեն Արմոյի Ծատուրյանի սեփականության իրավունքը դադարեցնելու համար հիմք ընդունել Վիլենա Մուսայելյանի կողմից Ստեփանակերտի քաղաքապետի 16.08.2013թ. թիվ 2055/Մ-5 տեղեկանքը, Ստեփանակերտ քաղաքի դատարանի 1997թվականի վճիռը, «ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ-ի 11.09.2013թվականի թիվ 405 գրությունը, ինչպես նաև քաղաքապետարանի 08.10.2013թվականի էլ1551/3 գրությունը:

2. Դիմումի քննության արդյունքների մասին տեղեկացնել Վիլենա Մուսայելյանին:

Կ.ՊԵՏՐՈՍՅԱՆ